

89
H9-9
5A

ՍԿՍՆԱԿ ԸՆԹԵՐՅՈՂԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

ՔԵՌԻ ԴԱՎՈՆ

891.99

Բ-22

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

891.99 8-19
F-22

10 NOV 2011
01 JAN 2009

ՍԿՍՆԱԿ ԸՆԹԵՐՅՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Արմ.

2-111082



ՍԿՍՆԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Ք Ե Ռ Ի Դ Ա Վ Ո Ն

Հ Ս Խ Հ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936

Առև Մ

28.02.2013

23571


Պատ. խմբ. Ս ի ր ա ս
Տեխ. խմբ. Տ Խ ա չ վ ա Գ Բ Ե Կ
Սրբազրիչ Հ. Դ ո լ ու խ ա Գ Ե Կ ա Գ

Դ լ ա վ լ ի տ ի Լ ա դ ո Ր Կ — 1095, Պ ա տ վ ե Ր 576,
Հ Ր ա տ ա Ր. 3709, Տ ի Ր ա մ 3000
Ու ս մ ա ն կ ՚ Ր ա տ ի տ ա վ ա Ր ա ն
Յ ե Ր Կ ա ն, Ո Ւ Գ ն ու Ն ի, 4

Հ ա ն ձ ն վ ա մ Ե ա Ր տ ա դ Ր ու Թ յ ա ն 1936 Թ. ա Վ Ր Ե լ ի 7-ին
Ս ա ո Ր ա գ Ր վ ա մ Ե տ ա Վ ի ու 20-ին ա Վ Ր Ե լ ի 1936 Թ.

Գ Ի Ն Ը 30 Կ Ո Պ.

АКСЕЛ БАКУНЦ
Дядя Даво
ГИЗ ССР Армении, Эривань



9737-91

Վ ո չ ք ո մ ա ս ի ն, Հ ա չ ի, վ ո չ Ա լ ե ք ի և վ ո չ ո ղ ա-
կ ա վ ա Ր Մ ա Ր ի ն ա յ ի և վ ո չ Ե լ ն ու չ ն ի ս կ Մ խ ո յ ի
«Թ ո ու ց ի կ բ Ր ի գ ա գ ի» տ ղ ա ն ե Ր ի մ ա ս ի ն Ե, վ ո Ր
ա հ ա գ Ր ու մ Ե մ, ա չ լ ա յ ն մ ա Ր գ ու մ ա ս ի ն, վ ո Ր Ր
խ Ր ճ ի Թ ու մ խ ո Ն վ ա մ բ ս ո զ մ ու Թ յ ա ն մ Ե ջ ի մ ա չ ք ի ն
չ ե Ր ը ն կ ն ու մ, մ ի ն չ Կ ն ե Ր ս վ ա գ ե Ր գ ո մ ի ա լ ա հ ա կ Ր
և լ ե դ ա պ ա տ ա ու կ ա ն չ ե Ր.

— Ք ե ո Ւ Դ ա վ ո, ք ե ո Ւ Դ ի ա վ ո, Ե ն ա ն ի Ր ա վ «Խ Ր մ-
բ ա պ ե տ ի» կ ա պ փ Ր Թ ա վ. յ Ե լ ի Ր, Թ Ե չ Ե, Ա Ր ա Ր
Ե ն ո Ր փ ո Ր փ ս ո Ր կ թ ա փ ա:

Յ ե լ ա վ մ ի ջ ա հ ա ս ա կ և ա մ Ր ա կ ա գ մ մ ի մ ա Ր գ,
մ Ե կ Ր ն Ր ա ն ց ի ց, վ ո Ր ո ն ք լ Ր ա ց ն ու մ Ե ն ք ա ու-
ս ու Ն Ր, հ Ե տ Կ Ե ն Թ ո ղ ն ու մ հ ի ս ու Ն Ր և ն ու չ ն ի ս կ
վ ա Թ ս ու Ն ի ն հ ա ս ն ե լ ո վ չ Ե ն փ ո խ ու մ ի Ր Ե ն ց ք ա չ լ-
վ ա մ ք Ր, դ Ե մ ք ի ա Ր տ ա հ ա յ ու ու Թ յ ու Ն Ր և ա ո հ ա ս ա-

բակ իրենց: Նրանք ունենում են խիստ սև և ձյունի նման սպիտակ մազեր, և ունենում են սպիտակին իրար խառնված, նրանք ապրում են դեռ յերկար, և այն տարիքում, յերբ ուրիշ ծերունիներն ունենում են զառամյալ մարմին և հենվում են ցուպին, — այդպիսիները դեռ առուջգ են և ունեն արթուն միտք:

Յեւով այդ ամբակազմ մարդը, վորն եր ինքը՝ քեռի Դավոն: Նրա հետեից դուրս յեկավ նաև Մխոն, վորին անվանում են «Կես կռիվ», վորովհետև նա հանդարտ չի կարողանում խոսել և նուջնիսկ, յերբ ժողովում խոսք ե առնում, նուջնիսկ այդ ժամանակ թնդում ե նրա ահագնադորդ ձայնը և թվում ե, թե գոռում ե մի ամբողջ լեռ: Յես ես դուրս յեկա «զկնի», ինչպես ասում են այդ գյուղում: «Կես կռիվ» Մըխոն արդեն վորոտալով սլանում եր, և լսելի չեր, թե ինչպես նա անարդում եր ինչ վոր լողը Միհրանի, նրան անվանելով «կուլակի թիկնացու», «կուլսողի տիգ» և այլ այսպիսի խոսքեր:

Իսկ քեռի Դավոն գնում եր միջահասակ մարդու սովորական քայլերով, այն վարժ քայլքով, վորով այդպիսի մարդիկ լուսաբացից մինչև ուր-

կեսոր կարող են կտրել լեռներ և ձորեր և նոր միայն նեղանալով շողից և վոչ հոգնածությունից՝ պառկել մի թիփի ստվերում: Դժվար չեր գուշակել, վոր «Կես կռիվ» Մխոն պիտի վորիկ գցեր և ավելի բարձր վորոտար լողըների, ծուլների, ավարանների և այլ այդպիսի մարդկանց հասցեյին և հենց այդ ժամանակ պիտի վրա հասներ քեռի Դավոն և լուռ ու մունջ գործ աներ:

Պատահել եր ահա թե ինչ:

«Խմբապետը», վոր մի կիսախելագար չերիտասարդ ցուլ եր, անպատիվ համարելով յեզների շարքը դասվել և կամ գալթակղված այն ազնիվ և ընտիր կերով, վոր ախոռապանները լցրել եյին ձիերի առաջ, կտրել եր վզի կապը և հարբած արջի նման ծառս յեղել կուլսողի ընդարձակ գոմում, վորից և վախեցած պահակը վազել եր հավարի: Ձիերից վոչ մեկը նրան մոտ չեր թողնում, իսկ Արաբը, չքնաղ մի հոգուգ, — դեռ շարունակում եր զայրագին վրնջալ, դուրսելով գոմի սալ քարերը:

Յերբ քեռի Դավոն ներս մտավ, տեսավ հետեւյալ պատկերը: Գոմի մյուս ծայրին, կիսամութի մեջ ցուլը կռացրել եր վիզը և բոռում եր.

մութի մեջ բոցկլտում ելին նրա արնախառն աչքերը: «Կես կռիվ» Մխոն դռան մոտ աղմկում եր ավելի բարձր, քան վրնջում եր Արաբը: Յեղ-
ների և ձիերի լերկար շարքերը, վորոնց վերջը
չեր չերևում, հանդարտ խժռում ելին կերը:
Միայն մի չերիտասարդ քուռակ, վորին ավելի
կվալելեր սնվել՝ որինակ առնելով հասակավոր
և պատկառելի ձիերից— շղալին անհանգստութ-
յամբ ցցել եր ականջները և ուզում եր ցույց
տալ, վոր ինքը ևս բաժանում ե չերևելի նը-
ժուլդ՝ Արաբի գալըութը: Իսկ չեղներից և
վոչ մեկը վորևե կերպ ցույց չեր տալիս իր
վերաբերմունքը և նույնպես կարելի չե ասել,
վոր նրանք ատելությամբ ելին լցված դեպի
«Սմբապետը», վորին որերից մի որպիտի ամոր-
ձատելին և նա ևս պիտի դառնար չարքաշ չեղ:

Քեռի Դավոն, առանց փոխելու քալերի ռիթ-
մը, անցավ գոմի չերկայնքով և ուղղակի մո-
տեցավ ցուլին: Նույնիսկ «Կես կռիվ» Մխոն
սարսափից լռեց և ալևա չվրնջաց Արաբը:
Քեռի Դավոն բռնեց «Սմբապետի» ականջներից
և առաջ չեկավ՝ հետևից ցուլը: Ապա նա ցուլին
հրեց չերկու պառավ չեղների արանքը, առավ

ձիւ խոտից հյուսված թելի կծիկը, գրպանից
հանեց կեմրարը և զարմանալի արագությամբ
ու ավելի զարմանալի վարպետությամբ վորորեց
ալնալիսի ամուր կապ, վոր հուր-հավիտյան
«Սմբապետը» չեր կարող քանդել: Նա ցուլին
կապեց չերկաթե սեպից, և միայն ալդ ժամա-
նակ նորից «փոթորիկ վրթավ» Մխոն ու դուրս
գնաց:

Ալդ ժամանակ քեռի Դավոն վոչ մի բառ
չարտասանեց և միայն, չերբ կապեց ցուլը,
գրպանից հանեց ծխախոտի տուփը և հաստ մատ-
ներով փաթաթեց ծխախոտը և ապա, ալն ել
կես հեգնանքով, ասաց գոմի պահակին.

— Հաբա հորի՞ ժողովքին կըսելիր ընցեր ե
քեռի Դավոնի ժամանակ, — և թեթև զարկեց
նրա մեջքին. — սովորի, տղաս, սովորի...

Ապա մոտեցավ մի ծանր ձիու, վորն ահագին
աղմուկով կըճտացնում եր ատամները, կարծես
գարու հատիկները փշրվում ելին ջրաղացի քա-
րերի տակ, — և շոյեց ձիու բաշը:

— Քրտնած ե ձին, տղա, — և ասաց նաև, վոր
գոմն արդեն չեղ ե, հարկավոր ե ձիերի նոր
գոմ կառուցեր:

— Քեռի Դավո, դու անշա բրիգադի մեջ ես:

— Ձե, յես դաշտավար եմ:

— Հապա ինչո՞ւ լեկար գոմը:

— Ձե՞ ես ել մերն ե,— և ձեռքը մեկնեց ձիերի ու լեզների կողմը.— բոլորը իմն ե:

Քեռի Դավոն գնաց:

Գոմի Պահակը, վորն իսկուհն՝ թողեց բարբառը, պատմեց այն ճանապարհի մասին, վորով նրանք ընթացել են, սկզբում՝ չորս տարի առաջ՝ միայն տասներկու տուն, վորոնք ունեցին միայն մի լեզ և վորոնց ծաղրելով անվանում էլին «չլուտի խումբ»: Ահա այս գոմը և նրա բակը հռչակված իշկան եր Ծարուրից և Որդուբաթից լեկող քարավանների համար: Այժմ այդ ծածկերի տակ հանգչում են մեքենաները և մի ամբողջ գումակ: Նրանք ելին տասներկու տուն և ունեցին միայն մի լեզ. առաջին հիմնադիրները մեջտեղ դրին ինչ վոր ունեցին՝ վերջին պարկ գարին ու նույնիսկ փշուր ձավար՝ փոխեցին գարու հետ և համայնական առաջին դաշտում սերմնացանը լի բուռով շողեց սերմը: Հետո լեռեսունից անցան և այս ձմեռ նրանք արդեն հարյուր վեց են, և հիմնադիրները պարծանքով նայում են հետ՝ չորս մեծ պատանիներին:

Պահակը պատմում եր այդ տարիների մասին, և այդ թվում եր մի պարզ պատմություն: Լեռ չի փլվել, չի լեղել ամենի պատերազմ, հրաշք չի լեղել, և միայն քրտինք են թափել հողի մշակները և նրանք, վորոնք ունեցին միայն մի լեզ, այժմ իրենց վաստակով տեր են դարձել լեռամալի և նախիրի, սալաշարքի և մեքենաների, ունենցորեն և գարի, կանայք կով են կթում, իսկ նաղարաչի Չոլոն նրանց զվարճացնում ե և թնդում ե «գլոնդը»: Այդ թվում եր մի պարզ պատմություն, և դժվար ե հաղորդել այն ներքին ուրախությունը, վորով համակված եր այդ լերիտասարդը, ինչպես այն մարդը, վոր խեղճության, հոգու ալյասեւման և ծայր չքավորության անդունդի ավից անդարձ անցել ե մի ուրիշ ափ և ուրախությունից կոխում ե այն հողը, վոր իրենն եր, բայց իրեն չեր կերակրում, տեսնում ե նույնպիսի մի ձմեռ, չեր լեռները ձյունոտ են, ահա դարձյալ Արաղի ավից բարձրանում ե տաք գոլորշի, բայց իր դռանն ալլա չի չորել սովի անը և նրա վաղը չի լերևում վորպես անորդանական կրակ մթագնած բուքի մեջ, այլ բացվում ե վորպես նորոգ գարնան առավոտ:

Խորճիթում հավաքվածներն խորհրդակցութիւնն ապելի նման եր պարզ գրուցի, բայց այդ հասարակ խօսքերը վորոշում ելին հարցուրավորմարդկանց անելիքն ամբողջ տարվա ընթացքում: Վորոշում ելին այս տարվա նորմաները և միաժամանակ ուրվագծում ելին կոլեկտիվի վողջարտադրութեան պլանը: Նստել ելին՝ ով ինչպես աշխատում եր, և միայն նրանք ելին սեղանի մոտ, վորոնք գրում ելին: Նույնիսկ մեկը խորճիթում գնում գալիս եր և յերբեմն բարձրացնում եր գլուխը. այդ ժամանակ նա հայտնում եր իր դիտողութիւնը, և նրան ևս լսում ելին այնպես, ինչպես մյուսներին, վորոնցից վոմանք նստել ելին պատի տակ, վոմանք՝ վառարանի շուրջը, իսկ մի քանիսը հաստ արկղի վրա, վոր անհայտ ե, թե ինչու յեր այդտեղ: Ամենքից գեղանկար տեղավորվել եր մի թիկնեղ մարդ: Նա չոքել եր և միևնույն ժամանակ համարյա պառկել մեջքի վրա, այնպես վոր նրա գլուխը ցըցված ծնկների հետ հավասար եր:

Յեւ ներկաները, վորոնք կոլխոզի ակտիվե ելի. նրա առաջատար ուժը, բոլորը՝ համարյա առանց բացառութեան խոսում ելին խելացի ծանրութեամբ: Ննջող չկար, ինչպես գլուղական

այն ժողովներում, յերբ գեկուցողի միալար ձոջնից կախվում ելին ունկնդիրները հոգնած գլուխները, և արդեն մի անկյունից լսվում եր մրափի աղմուկ, կարծես այն կողմից գնում եր մի մենավոր սալ և սալը խուլ ճռնչում եր: Պատասխանաւորութեան զգացումի հետ, նրանց խօսքերի մեջ կար մի խստութիւն. և յերբ լռում ելին՝ այդ լռութիւնն ևս վկայում եր, վոր մարդիկ կշռում և կշռադատում են: Յեւ նույնիսկ «Կես կռիվ» Մխոն ալլես յերկար չեր աղմկում, ալլ բավականանում եր ընդհատ բացականչութիւններով, վոր թեպետ վորոտածայն ելին, բայց և այնպես խելացի ելին: Իսկ քեռի Դավոն արդեն գրավել եր իր տեղը և լալն դանակով տաշում եր մի սեպ, տաշում եր և մտածում:

Հեշտ չի այն աշխատանքը, վորի համար նրանք ուղեղ ելին մաշում: Ձյունի բարակ շերտի տակ լուռ քնել են այն դաշտերը, վորտեղ վաղը նրանք պիտի քրտինք թափեն: Իսկ հարկավոր ե ավելի լավ կազմակերպել համայնական դաշտերի վարը, հարկավոր ե բարձր բերք ստանալ: Հարցուրավոր հեկտար դաշտերի վրա աշխատելու յեն տարբեր մարդիկ, և ահ... Լատք ե

այդ մարդկանց դասավորել այնպես, վոր ստաց-
վի առավել արդյունք: Կա բեխով Տիգրան,
կա և Թրմարցի Տիգրան, կա Տիգրան, վոր ան-
հայտ ե, թե ինչու կոչվում ե «հայու տղա»,
վերջապես չորրորդ Տիգրանին կոչում են «կոմսո-
մոլ Տիկո», և ահա չկա ավելի լավ ջրվոր: քան բեխով
Տիգրանը. Թրմարցուն չի կարելի քաղհանի
ուղարկել, վորովհետև նա կոչվում ե քաղհանա-
վոր կանանց հետ, այնինչ նրանից լավ ֆուրգոն
քշող չկա. «հայու տղան» բամբակի «հոգու մեջն
ե», իսկ կոմսոմոլ Տիկոն որնիբուն մեքենաների
հետ ե: Կա տափ, բամբակի արաթ, պետք ե
վորոշել, թե վոր պատանին ձեռնհաս ե հորիկ
լինելու, քանի տղամարդ կարող ե գետափի
խոտատեղը հնծել, ով ե դարսում բարձր բար-
դոց և այնքան ամուր, վոր նույնիսկ հարավի
քամին չքանդի: Սեղանի մոտ նստած մեկը,
վոր ղեկավարում ե խորհրդակցութունը, հար-
ցնում ե.

— Քեռի Դավո, լերկար արտի ներքեի մասը
պիտի թանձր սերմել, թե՞ վերևի:

Քեռի Դավոն մի քիչ մտածում ե և պատաս-
խանում: Յեվ դուրս ե գալիս, վոր վոչ վերևը
պիտի սերմել և վոչ ել ներքեը նոսր, այլ լեր-

կու ծալերը հավասար խտությամբ, իսկ մեջ-
տեղը թանձր:

Յեվ դեռ հարյուրավոր այսպիսի հարցեր՝
բամբակ ցանողների, քաղհանավորների, սերմ-
նացանների և հնծվորների, դարբնի և սալա-
պանների մասին, աղյուս թափողների և տուն
կառուցող վարպետների աշխատանքի ու նրա
վարձատրության չափի մասին և այն մասին,
թե ինչպես սերմել, վոր արտերում անտերմ
«խեց» չմնա, վոր հողի բոլոր գուղձերը փշրվեն.
ով ե քաղցը հնծում, ով ե լավ առու քաշում,
լար տալիս և մարգոց անում, լե՛րբ ե հարկավոր
ցեղաշուր և լե՛րբ ակոսով ջուր, — և մի՞թե հը-
նարավոր ե միառմի թվել աշխատանքի այն
բոլոր տեսակները և նկարագրել աշխատանքի
կազմակերպման դժվարությունները և նրանց
փորձը, վորոնք չորս տարվա ընթացքում լե՛փվել
են այն դժվարությունների բովում և վորոնցից
յուրաքանչյուրը փակ աչքերով ել տեսնում ե
իրենց հողերը, իրենց մեքենաներն ու մարդկանց,
վորոնք միացրել են աշխատանքը:

Յեվ դեռ լերկար ժամանակ և վոչ թե մի ուր,
անձրևից ծեծված և արևառ ղեմքերով այդ

փորձառու մարդին, համայնական հողի մշակներ-
րի այդ նոր ցեղը պիտի ուղեղ մաշի և նրանց
աշխատանքը պիտի ուռճանա լիքը հասկերով:

Յերբ ներս մտանք քեռի Դավոյի տունը,
տնեցիների դեմքի վրա նկատեցինք մեր գալու
հետ ընդհատված հետաքրքիր պատմության
հետքերը. իսկ քեռի Դավոն այնպես եր նստել
և մյուսներն այնպես ելին նայում նրան, վոր
մատնում ելին, թե այդ հետաքրքիր պատմողը
հենց ինքը քեռի Դավոն եր, վորի չերկու կող-
քին, թախտի վրա, քոթոթների նման կծկվել
եյին չերկու թուխ մանուկներ, ըստ չերևույթին
քեռի Դավոյի թոռները: Նրանցից մեկը դեռ
բավական չերկար մնաց այդ դիրքով և նրա
լախն չռած աչքերից չերևում եր, վոր մանուկը
դեռ պապի պատմածի աղդեցության տակ ե:

Նրանց սենյակը շատ բան եր ասում իր
տիրոջ՝ քեռի Դավոյի նկարագրի մասին: Նույն-
պես ամուր նստել ելին պատերը, ինչպես քեռի
Դավոյի կազմվածքն եր, և ամեն ինչից հայտնի
լեր, վոր տերը տունը կառուցել ե խնամքով,
ամեն ինչ իր տեղն եր և մտածված, ինչպես

նրա խոսքերը, և դեռ շատ վաղուց, չերբ քեռի
Դավոն անոթեան, թափառական եր, այդ դռան
նախը չեղել ե նրա մտքում:

Տան կառուցվածքի կոշտութունը մեղմացրել
եր կանացի մի ձեռք, վորը պատուհաններից
կախել եր մաքուր վարագույրներ, պատերին
նկարներ և դուշնրդուլն թղթերից զարդեր:
Լիքն եր տան ներսը, դռան մոտ կախված եր
մի փափուկ չերեսսրբիչ, իսկ վերևից դաշտային
չորացած ծաղիկների միջից նայում եր Բուդ-
յոնին: Այդ լիքը տան բոլոր իրերի և մարդ-
կանց վրա կար ապահով կյանքի կնիքը, իսկ
փայլուն սամավարը կարծես ավելի զարդ եր
և նորափեսայի նման ուռած-փքված նայում եր:

Յերկար կլինի պատմել մեր զրույցը, վոր
սկսվեց ինչպես սկսվում ե պարզ զրույցը. քեռի
Դավոն հայտնեց, վոր հենց նույն ուրը նրա ա-
ռաջարկով կոլտոզի ակտիվի խորհրդակցութունը
վորոշել ե կառուցել ձիերի նոր դոմ:

— Ել վհնց ես:

— Գոհություն, — և հաստ մատներով սեղանի
վրա հավաքում եր հացի փշրանքները: Միշտ
անհանգիստ են նրա ձեռքերը, միշտ ինչ վոր մի

բան եւ անուամբ անհա հավաքեց հացի փշրանք-
ները և սկսեց հարգարել սփռոցի խճճված ծո-
պերը:

Նա պատմում եւ այն, ինչ արդեն հայտնի չե-
լինչ վոր վկայում են նրա տունը, տան իրերը,
տանեցիները, նրանց հագուստը, նրա թոռ-
ները, և վերջապես իր՝ քեռի Դավոյի անվրդով
ու գոհ դեմքը, նրա զրուցի խաղաղ ընթացքը:

Պատահե՞լ ե ձեզ ձմռան բուքին լինել դըր-
սում՝ խավարի մեջ, չերբ ձյունախառն բուքը
ծածկում ե բոլոր ճանապարհները, ձյունի փա-
թիլները սուր ավազների նման ծեծում են
ձեր դեմքը, սառչում ե ձեր շունչը և անհ թը-
վում ե, վոր այլևս փրկության ուղի չկա, փըր-
կության ուղի՝ այդ խավար գիշերը, չերբ վոռ-
նում ե բուքը. և անհ հանկարծ ցոլում ե մի
վիթխարի կրակ. դժվարությամբ հասնում եք
կրակին, և չերբ արդեն տաքացել են ձեր ձեռ-
քերն ու մարմինը, չերբ հնարավոր մահը դառ-
նում ե անցյալ, իսկ փրկությունը՝ հրաշք, կը-
րակի մոտ ուրիշներին հանդարտ ձայնով պատ-
մում եք այն ուղիների մասին, վորտեղ խա-
վար եր և վոռնում ե մահվան բուքը: Ահա

այդպես իբրև մի մարդ, վոր հասնում ե ապա-
հովության ափը, քեռի Դավոն պատմեց իր և
իր նմանների կյանքը: Նրանք և նրանց պա-
պերը այդպիսի տուն չեն ունեցել, նրանք
ապրել են մի մութ չերկրում, մրոտ տների թո-
նրածխի մեջ: Նրանք ունեցին չեղեգնյա խսիր,
վոր փռում ելին ոջախի առաջ և ամբողջ գեր-
դաստանը պառկում եր խսիրի վրա, ինչպես
քարայրի գազանը չոր տերևների վրա: Յեվ
նույնիսկ այդ կյանքը շատ չեղավ նրանց հա-
մար, և ինչպես կրակվող չեղեգնուտից փախչող
թռչուններ, նրանք հեռացան իրենց բարձր
քարափներից և քարափների խեղճ տներից:

Յերբեկեցե մի գրիչ կպատմի քեռի Դավոյի
կյանքը և այդ գրիչը շատ կգտնի հերոսություն-
ներ նրա կյանքում: Յեվ նա կզարմանա, թե ի՞նչ-
պես ե, վոր բոլոր պատուհասների ընթացքում
չի անհետացել քեռի Դավոյի զարմը: Բարձր
վոգեւորութուն կհոսի նրա չերակներում, չերբ
այդ պատմիչն իր պատմությունը հասցնի մին-
չև այն ուրը, չերբ իրար հետ միացան տասներ-
կու ծուխ և այս հողերի վրա վառեցին նոր
կյանքի կրակները և առաջին տասներկուսի



հետ քեռի Դավոն լսեց համայնական կյանքի կոչը.

— Իսկ ի՞նչ ես անելու ալն ավելցուկը, վոր ունես...

Այստեղ մեր զրույցին խառնվեցին և կանայք՝ քեռի Դավոյի կիներ և նրա հարսը, ալն թուլս մանուկները մայրը, վորի կանացի մատները քնքուշութուն ելին տվել Դավոյի կառուցած տան հաստ պատուհաններին և պատերին։ Յերևաց, վոր կանայք տարբեր կարծիքի լեն ավելցուկ ցորենի և մյուս մթերքների ոգտագործման մասին, նրանք պահանջում ելին «կարի մեքենա» և «կոավաթ», իսկ հարսը նույնիսկ պատեֆոն։ Այնինչ քեռի Դավոն հակառակ ե մտածում, նա կամենում ե իր նոր տան կողքին կառուցել մի ավելի ընդարձակ սենյակ, գետնից բարձր, վոր ներքեը լինի մառան, իսկ կտուրի վրա ամառվա չարդախը։ Յեվ չերբ պատրաստ կլինի այդ սենյակը, ալն ժամանակ նա կզնի չերկաթյա մահճակալ։ Նրա թոռները գլդոր-մլդոր փաթաթվեցին պապին, կարծես այդ չեղանակով հայտնեցին, վոր իրենք չեն ուզում վոչ խոր մառան և վոչ չերկաթե մահճակալ, ալլ միայն ուզում են, վոր միշտ ունե-

նան այդպիսի պապ, բարձրանան նրա ուսերի վրա, գլորվեն նրա գոգում և պապը նրանց զարմանալի պատմություններ պատմի։

Ճրագները վառվեցին։

Յերբ սեղանի արկղից հարսը լուցկի հանեց, իմ աչքին ընկավ ելեքտրոլարիկապոցը, կոճակները, գեղին պատրոնը և նույնիսկ մի ելեքտրոլամպ։

— Ինչո՞ւ յես հավաքել, քեռի Դավո։

— Հաբա մեզ լուս կիտա Սիմիստրոն...

Սիմիստրոն, Յեմստրոյը, Յեմշինը...

Քեռի Դավոյի պատուհանից չերևում եր հայկակալան հին գլուղին ոտարոտի պեյզափ։ Դիմացի բլուրների ստորոտում թարթում ելին բազմաթիվ ճրագներ, բլուրների վրա չերևում ելին ավելի զորեղ կրակներ։ Թվում եր, թե ամբողջ դաշտում փռվել ե արդյունաբերական մի մեծ քաղաք և նրա բազմաթիվ կրակները վառվում են գիշերային մթության մեջ։ Պատուհանից նայում ելի այդ հոյակապ տեսարանին, իսկ քեռի Դավոն պատմում եր, վոր գործարանի շաղախին քիչ քրտինք չեն խառնել և իրենք, նաև ինքը, և ահա այդ վաստակի

փոխարեն «Միմիստրոն» նրանց լույս ե խոս-
տացել:

— Ե, բարով մնաս, քեռի Դավո:

— Բարով, բարով տեսանք:

Բակից ավելի փառահեղ եր Յեմշինը: Քեռի
Դավոյի տան պատուհանից լերևում ելին միայն
տների մի մասը և բլուրները, բայց չե՛ր լերե-
վում վիթխարի ծխնելուզը, վորից թանձր ծուխը
բարդ-բարդ բարձրանում եր: Լսվում ելին պալ-
թյուններ և խուլ աղմուկ. լերևի վագոնետների
մեջ լցնում ելին կրաքար:

Գլուղի նոր թաղով դառնում ելի տուն: Յեր-
կու- կողմը միանման և մաքուր տներ ելին և
լուրաքանչյուր տան զուգ պատուհանից լույսի-
բարակ շերտ եր ընկել նոր փողոցի վրա: Յեվ
ինչպես մի նետ, այդ փողոցը ձգվում եր դեպի
լեզեզնուտը և Զուգ լեռը կարծես փողոցի
ծալըն եր:

Մուգ մանիշակագույն շղարշ եր նստել լեռան-
լանջերին և նրանց ստորոտներն ընկղմվել ելին.
շղարշի խավար ծալքերում: Բայց այնքան, սպի-
տակ եր լեռան գագաթը, վոր նույնիսկ այդ
մութ շղարշի միջից ցոլում եր նրա սպիտա-
կությունը, ինչպես անարատ մարմինը թափան-

ցիկ քողի միջից: Վոսիեղեն լուսինը, վոր արևի
նման եր, բայց առանց ճառագայթների, — լու-
սինը դողդողալով իջնում եր խոր անդունդի
վրա: Այն կողմերում հովիվները հրդեհել ելին
լեզեզնուտը և թվում եր, թե ծով ե բռնկվել:
Այրվող լեզեզնուտից բաղերը կանչելով պտտ-
վում ելին իրենց կրակվող բների վրա: Փամին
բարձրանում եր այրվող լեզեզնի և խավարի
մեջ նրանք նման ելին հրաթև թռչունների:
Լեռը բարձր եր բոլորից և նույնիսկ այդ հըր-
դեհվող ծովը չե՛ր լուսավորում նրա խավար
լանջերը:

Մի տնից լավեցին խուլ ձայներ. կարծես
բազմաթիվ կանայք միաժամանակ և խմբով ասա-
ցին նույն բանը: պատուհանից լերևաց սենյա-
կի ներսը, վսրը հիշեցնում եր քեռի Դավոյի
տունը. միայն չկային յերեսաներ և տղամար-
դիկ: Ութը-տասը գեղջկուհիներ հասարակ
սեղանի շուրջը բոլոր նստել ելին և լերբ Մա-
րինան բարձրացնում եր ձեռքը, նրանք խմբով
ընթերցում ելին: Մեկը նույնիսկ մատը շար-
ժում եր տողերի հետ, ինչպես դպրոցական լե-
րեխա.

— Մեր կոմունան վար կանի:

Յեվ խուլ դղրդացին այդ բառերը, ինչպես
բազմության սրբազան լերդումը, լերք ծովի
նման ծփում է այդ բազմութունը, նրանց քայլե-
րից թնդում է գետինը, հրդեհ է բռնկվել նը-
րանց հոգիներում և հողմը կրակին է մատնել
հին լեդեգնությունները և տիղմը և թունավոր ճա-
հիճը, հուրը խանձում է ճահիճների ղեռուններին,
կրակի լեզվակները ճեղքում են դարավոր խա-
վարը և կարիքից ազատագրված մարդը ճախ-
րում է վորպես հպարտ բազե:

A. 1936r.
Art № 52
R. m.

Вид. № 33484

ՀՀ Ազգային գրադարան



NL0326711

344

ԳԻՆԸ 30 Կ.

23571

